# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

Տեքստիլ Փիփ ՍՊԸ-ն ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-26/08 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը |
|---|---|
| 9 | Ապրանքները պատրաստվում են Հայաստանի Հանրապետության կառավարության 20.12.2018թ. N 1517-Ա որոշմամբ հաստատված չափորոշիչներին և ձևերին (նկարներին) համապատասխան: Վերնաշապիկ (երկարաթև, կանացի)՝ ուսադիրներով (Ձև 12): Վերնաշապիկ (բաց կապույտ՝ 138 հատ և սպիտակ՝ 4 հատ), որը պատրաստվում է 60% բամբակյա խիտ կտորից (40% պոլիեսթեր, 190 գ/մ2 (թույլատրելի շեղում՝ +, - 2%)), երկարաթև՝ հանվող ուսադիրներով, ծալովի օձիքով: Վերնաշապիկը կոճկվում է 8 կոճակով, վերևի մասում առանց կոճակի: Առաջամասերին մշակված են ձևավոր ծալքով և կափույրով գրպաններ, որոնք կոճկվում են մեկ օղակ կոճակով: Վերնաշապիկի ներքևի մասում կարվում է 55 մմ լայնությամբ գոտի՝ կողքային մասերում 12-18 սմ երկարությամբ ներկարված առաձգական ժապավենով: Առջևի մասի գոտին կոճկվում է 2 կոճակով: Երկարաթև վերնաշապիկը ավելի կոշտ օձիքով հարմարեցվում է փողկապի հետ: Կանացի վերնաշապիկը՝ առջևից գրպանների տակից մինչև գոտին, ունի սեղմոն և կոճկվում է ձախից: Ձախ թևքին առկա է թևքանշան (Ձև 20)՝ նշված որոշմամբ սահմանված պահանջներին համապատասխան: Վերնաշապիկները ներսամասից պետք է ունենան պիտակ, որի վրա պետք է նշված լինի դրանց չափսը: Նախքան վերնաշապիկների պատրաստումը վերնաշապիկների գունային գամման համաձայնեցվում է Գնորդի հետ: Վերնաշապիկների ամբողջ քանակը պետք է պատրաստվի միևնույն գործվածքից: Ընդ որում, նախապես (մինչև վերնաշապիկների կարելը) Վաճառողը Գնորդին է ներկայացնում նշված գործվածքի բաղադրության, կարգի, ներկի կայունության և մակերեսային խտության վերաբերյալ ՀՀ-ում հավատարմագրված կազմակերպության կողմից տրված լաբորատոր հետազոտության եզրակացություն: Ապրանքների |

| | |
|---|---|
| | փաթեթավորումը՝ պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինեն ապրանքի անվանումը, քանակը, չափսերը: Ապրանքների տեղափոխումն ու բեռնաթափումը իրականացնում է Վաճառողը՝ իր միջոցների հաշվին, նախապես Գնորդի հետ համաձայնեցնելով մատակարարման կոնկրետ հասցեն: |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

ООО Текстиль Пип в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-26/08 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар |
|---|---|
| | технические характеристики |
| 9 | Товары изготавливаются в соответствии с критериями и образцами (фотообразцами), утвержденными постановлением Правительства Республики Армения N 1517-А от 20.12.2018г. Сорочка (с длинными рукавами, женская) с погонами (Фотообразец 12). Сорочка (светло-синяя - 138 штук и белая – 4 штуки), которая изготовливается из плотной хлопковой ткани 60% (полиэстер 40%, 190 г/м2, (допустимое отклонение: +, - 2%)), с длинными рукавами, со съемными погонами, со складным воротником. Сорочка застегивается на 8 пуговиц, в верхней части -без пуговицы. В передних частях обработаны карманы с фигурными складками и клапанами, которые застегиваются на одну пуговицу круг. В нижней части сорочки шьется пояс шириной 55 мм, в боковых частях - вшитыми эластическими лентами длиной 12-18 см. Пояс передней части застегивается на 2 пуговицы. Сорочка с длинными рукавами с более жестким воротником приводится в соответствие с галстуком. Женская сорочка в передней части с низа карманов до пояса имеет вытачку и застегивается слева. На левом рукаве есть шеврон (Фотообразец 20), в соответствии с требованиями, установленными указанным постановлением. Сорочки с внутренней стороны должны иметь ярлык, на котором должен быть указан их размер. До изготовления сорочек цветовая гамма сорочек согласуется с Покупателем. Полное количество сорочек должно изготавливаться из одинаковой ткани. При этом, заранее (до шитья сорочек) Продавец представляет Покупателю выданное аккредитованной в РА организацией заключение лабораторного исследования о составе, категории, стабильности краски и поверхностной плотности указанной ткани. Упаковка товаров - в |

| | |
|---|---|
| | полиэтиленовых прозрачных пакетах, маркированные, на марках должны быть отмечены наименование, количество, размеры товара. Перевозку и разгрузку товаров осуществляет Продавец, за счет своих средств, заранее согласовав с Покупателем конкретный адрес поставки. |